

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 6-ԻՆ
ԺԱՄԸ 15:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՈԼՈՐՏԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ
ՆԻՍՏԻ

քաղ. Երևան
Մասնակցում էին՝

Խորհրդի անդամներ՝

Ա. Ղարիբյան	ՀՀ Նախագահի գլխավոր խորհրդական
Տ. Դավթյան	ՀՀ Էկոնոմիկայի նախարար
Վ. Գաբրիելյան	ՀՀ Ֆինանսների նախարար
Հ. Թովմասյան	ՀՀ արդարադատության նախարար

Հրավիրվածներ՝

Դ. Սարգսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Կ. Մինասյան	ՀՀ Էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ
Լ. Հունանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ
Ա. Եղիազարյան	Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն ԾԻԳ-ի տնօրենի պաշտոնակատար
Վ. Հենլն	ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի տնտեսական և բնապահպանական ծրագրերի ղեկավար
Տ. Սուքիասյան	ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի տնտեսական ծրագրերի համակարգող
Զ. Զիմա	ԱՄՆ ՄԶԳ Երևանյան գրասենյակի ղեկավար
Ք. Փեյնս	ԱՄՆ ՄԶԳ Երևանյան գրասենյակի ներկայացուցիչ
Դ. Բոբերկ	ՄԱԶԾ Երևանյան գրասենյակի ներկայացուցչի տեղակալ
Վ. Ռ. Պալեբու	ՄԱԶԾ Երևանյան գրասենյակի ներկայացուցիչ
Հ. Սարաջյան	ՄԱԿ-ի զարգացման ծրագրի հասարակայնության հետ կապերի պատասխանատու
Վ. Պողոսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի

Ֆինանսատնտեսագիտական վարչության գլխավոր
մասնագետ

Վ. Կոիկյան

Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն ՄԻԳ-ի
տնօրենի տեղակալ

1. ՀՀ կառավարության աշխատակազմի «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ՄԻԳ-ի գործարկման ուղղությամբ կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն

(Ա. Եղիազարյան, Տ. Սարգսյան)

Օրակարգի 1-ին հարցը զեկուցեց «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ՄԻԳ-ի տնօրենի պաշտոնակատար Ա. Եղիազարյանն և նշեց, որ հիմնարկի ձևավորումն անցել է ստեղծման և կայացման մի քանի փուլ: Հիմնարկի ստեղծման փուլում՝ 2011 թվականի սեպտեմբերի 17-ին, ընդունվել է ՆՀ-246-Ն ՀՀ Նախագահի հրամանագիրը՝ բարեփոխումների խորհրդի ստեղծման մասին, որին հաջորդել են ՀՀ կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 13-ի N 1462-Ն և N 1503-Ն, ՀՀ վարչապետի 2011 թվականի նոյեմբերի 16-ի N 1072-Ն որոշումները: Այնուհետև Ավստրիական զարգացման գործակալության կողմից հիմնարկի աշխատավարձի համար նախատեսված շուրջ 500,000 եվրո գումարը փոխանցվել է համապատասխան հաշվին, որից հետո ՀՀ կառավարության կողմից տրամադրվել է համապատասխան գրասենյակային տարածք և այդ տարածքի վերանորոգման համար անհրաժեշտ գումար: Վերանորոգման աշխատանքներն արդեն իսկ ավարտվել են, ինչպես նաև ավարտին են մոտենում գույքի մատակարարման աշխատանքները: Հիմնարկը համալրվել է 7 աշխատողով՝ ներառյալ տնօրենի պաշտոնակատարը: Հայտարարվել են նաև մրցույթներ այլ աշխատատեղերի համալրման համար, որը կամփոփվի 2012 թվականի մայիսի 2-ին, և, որից հետո հիմնարկի աշխատողների թվաքանակը կհասնի 22-ի, իսկ 2012 թվականի սեպտեմբերի դրությամբ վերջիններիս թվաքանակը կհասնի 24-ի: Այժմ ընթացի մեջ է գտնվում համակարգչային ցանցի և կապի ներդրման աշխատանքների իրականացման գործընթացը և 2012 թվականին մայիս ամսին համապատասխան գրասենյակային տարածքում արդեն կմեկնարկվեն աշխատանքները:

Քննարկումներից հետո որոշվեց՝ ընդունել ի գիտություն «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ՄԻԳ-ի տնօրենի պաշտոնակատար Ա. Եղիազարյանի ներկայացրած հաշվետվությունը:

2. ՀՀ կառավարության աշխատակազմի «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ՄԻԳ-ի աշխատանքային ծրագրի և վերլուծության ենթակա առաջին երեք ոլորտների հաստատում

(Ա. Եղիազարյան, Տ. Սարգսյան)

Օրակարգի 2-րդ հարցը զեկուցեց «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ԾԻԳ-ի տնօրենի պաշտոնակատար Ա. Եղիազարյանը և նշեց, որ ՀՀ Նախագահի գլխավոր խորհրդական Ա. Ղարիբյանի և ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ Կ. Մինասյանի հետ կայացած խորհրդակցությունների արդյունքում նախանշվել է ԾԻԳ-ի գործունեության կարգը և իրավական ակտերի փոփոխությունների առաջին փաթեթները ներկայացնելու համար անհրաժեշտ է ընտրել ՀՀ Նախագահի 2011 թվականի սեպտեմբերի 17-ի ՆՀ-246-Ն հրամանագրով սահմանված ոլորտներից երեքը, որոնց մասով առաջինն են ներկայացվելու իրավական բարեփոխումների փաթեթները: Մինևույն ժամանակ բարեփոխումների փաթեթների պատրաստմանը զուգահեռ իրականացվելու է նաև ամբողջ օրենսդրության ուսումնասիրություն և գույքագրում: Այս աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ է, որպեսզի միջազգային լավագույն փորձին տիրապետող կազմակերպությունները, որոնք աշխատել են այս բարեփոխման ոլորտում շուրջ 10 երկրներում, ԾԻԳ-ի աշխատողների համար իրականացնեն խորհրդատվական վերապատրաստումներ և մինևույն ժամանակ ներդնեն բարեփոխման աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ էլեկտրոնային ծրագիր: Ներկա դրությամբ արդեն իսկ աշխատանքներ են տարվում հիմնարկի հասարակայնության հետ կապերի ռազմավարության մշակման, ինչպես նաև վեբ-կայքի ստեղծման ուղղությամբ:

Ներկայացված հարցի կապակցությամբ նա առաջարկեց խորհրդին ընտրել առաջին երեք ոլորտները, որտեղ պետք է իրականացվեն բարեփոխումները՝

- 1) հանրային ծառայություններ.
- 2) ոստիկանություն.
- 3) կադաստր.
- 4) սոցիալական ապահովության ոլորտ (առանց կենսաթոշակային ոլորտի):

ՀՀ արդարադատության նախարար Հ. Թովմասյանն առաջարկեց ոլորտներն ընտրելիս դրանք համադրել ներկայումս պետական մարմինների կողմից արդեն իսկ իրականացվող բարեփոխումների հետ:

ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար Դ. Սարգսյանն առաջարկեց ուսումնասիրել ներկա պահին ՀՀ ազգային վիճակագրության ծառայության կողմից տնտեսավարող սուբյեկտներից պահանջվող շուրջ 70 տեսակի հաշվետվությունները, քանի որ դրանցում պահանջվող տեղեկատվություններում առկա են կրկնություններ:

ՀՀ Էկոնոմիկային նախարարի առաջին տեղակալ Կ. Մինասյանը նշեց, որ ՀՀ ազգային վիճակագրության ծառայության հաշվետվությունների կրճատումը նախատեսված է մեկ այլ ծրագրով, որը նախատեսում է նաև այդ հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի ներդրում: Այդ իսկ պատճառով առաջարկեց, որպեսզի «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ԾԻԳ-ը չզբաղի հաշվետվությունների տեսակների վերանայմամբ:

ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը նշեց, որ ոլորտները ընտրելիս անհրաժեշտ է առաջնորդվել հետևյալ սկզբունքներից մեկով`

1) հասարակության համար առավել մտահոգիչ ոլորտները, որտեղ բարեփոխումը կավելացնի վստահությունը առհասարակ այս բարեփոխումների հանդեպ.

2) հաշվի առնելով հիմնարկի նորաստեղծ լինելու և համապատասխան մեթոդաբանության փորձարկված չլինելու հանգամանքները` ընտրել առավել հեշտ ոլորտներ` հնարավորություն տալով հիմնարկին կարճաժամկետ հատվածում արձանագրելու դրական արդյունքների:

Այնուհետև նա նշեց, որ ընտրության չափանիշը կլինի համադրությունը պետական մարմինների կողմից իրականացվող բարեփոխումների հետ և, որ այն ոլորտները որտեղ արդեն իսկ մեկնարկել են բարեփոխումներ, այս պահին չեն ուսումնասիրվի «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ԾԻԳ-ի կողմից:

**Քննարկումներից հետո որոշվեց`** հաստատել ուսումնասիրության ենթակա հետևյալ 3 ոլորտները և բարեփոխումների փաթեթները խորհրդի քննարկմանը ներկայացնելու ժամկետները`

- 1) հանրային ծառայությունների ոլորտ` 2012 թվականի սեպտեմբեր.
- 2) տրանսպորտի և կապի ոլորտ` 2012 թվականի հոկտեմբեր.
- 3) առողջապահության, մասնավորապես, դեղերի որակի հսկողության ոլորտը` 2012 թվականի նոյեմբեր:

3. ՀՀ կառավարության աշխատակազմի «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ԾԻԳ-ի 2012 թվականի ծախսերի նախահաշվի հատատում

-

(Ա. Եղիազարյան, Տ. Սարգսյան)

Օրակարգի 3-րդ հարցը զեկուցեց «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ԾԻԳ-ի տնօրենի պաշտոնակատար Ա. Եղիազարյանն և նշեց, որ ԾԻԳ-ի 2012 թվականի ծախսերի նախահաշվը համաձայնեցված է ՀՀ ֆինանսների նախարարության հետ

և առաջարկեց նախքան լիազոր մարմնի ղեկավարի կողմից դրա հաստատումը խորհրդի կողմից այն ընդունել ի գիտություն: 2012 թվականի համար **«Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն»** ԾԻԳ-ի 2012 թվականի ծախսերի նախահաշիվով ծախսային մասը կազմում է շուրջ 137.0 մլն դրամ, որից՝ շուրջ 11,3 մլն դրամը՝ ընթացիկ սպասարկման ծախսերի գծով (էլեկտրաէներգիա, ինտերնետ, կապ և այլն):

Քննարկումներից հետո որոշվեց՝ ընդունել ի գիտություն **«Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն»** ԾԻԳ-ի 2012 թվականի ծախսերի նախահաշիվը:

4. Դոնոր կազմակերպությունների հետ նախատեսված պարբերական հանդիպումներին մասնակցելու նպատակով բարեփոխումների խորհրդի անդամ ընտրելու մասին

(Վ. Կտիկյան, Տ. Սարգսյան)

Օրակարգի 4-րդ հարցը զեկուցեց «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ԾԻԳ-ի տնօրենի տեղակալ Վ. Կտիկյանը և նշեց, որ 2011 թվականի նոյեմբերի 3-ին դոնոր կազմակերպությունների և ՀՀ կառավարության աշխատակազմի միջև ստորագրվել է մտադրությունների մասին նամակ, որով սահմանվել է դոնորների հետ քննարկումների ձևաչափը: Այդ կապակցությամբ նա առաջարկեց խորհրդի անդամներից որևէ մեկին ընտրել որպես այդ հանդիպումների մշտական մասնակից:

Քննարկումներից հետո որոշվեց՝ դոնորների հետ պարբերական հանդիպումների մասնակից ընտրել ՀՀ Նախագահի գլխավոր խորհրդական, բարեփոխումների խորհրդի անդամ Արամ Ղարիբյանին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ, ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ